№ 88 Մայիսի 21 (Յունիսի 2) 1882 Մայիսի 21 (Յունիսի 2) № 88

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարազգացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Չիբրայիլից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Իշխան Օրլովի յայտնութիւնը։ Թիւրքիա։ Եգիպտոս։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ։ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Խամսայի Մէլիքութիւններ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՉԻԲՐԱՅԻԼԻՑ

—

Մայիսի 9-ին

Երեք տարի է որ Չատրուա գիւղի հողևոր ուսումնարանը գոյութիւն ունի։ Ուսումնարանը բաւական առաջադիմութիւններ արաւ այդ երեք տարվայ ընթացքում։ Հոգաբարձուներ Մ. քահանայ Տէր-Սրբիտնեանց և պ. Յ. Մէլքումեանց անայ մեծ ջանք են թափում ուսումնարանը բարելաւելու, բայց նիւթական միջոցներ դժբաղդաբար պակաս են գալրոցին։ Պարտնները կամաւոր նուիրատուութիւններ հաւաքելով հազիւ կարողացան երեք տարվայ ընթացքում լրացնել ուսուցչի ռոճիկը և գալրոցի միւս ծախսերը։ Բայց վերջապէս, չը կարողանալով այլ ևս կառավարել գալրոցը, հոգաբարձուները հրաժարական են տուել իրանց պաշտօնից։

Շուշու գաւառի թեմական տեսուչ պ. Յովհաննէս Տէր-Գրիգորեանց, ապրիլի 25-ին այցելից Չատրուա գիւղի ուսումնարանը։ Նրա յորդորմամբ և տանուտէրի օգնութեամբ ժողով կազմվեցաւ հասարակութեան գրագէտ և անգրագէտ անձինքներից։ Պ. տեսուչը հասարակութեան ուշադրութիւնը դարձրեց ուսումնարանի գրութեան վրա։ Աչքի առջև ունենալով որ ներկայ հոգաբարձութիւնը հրաժարվում է իր պաշտօնից, պ. տեսուչը առաջարկեց հասարակութեանը իր կամքով նոր հոգաբարձուներ ընտրել։ Բացի սրանից պ. Տէր-Գրիգորեանն ասեց թէ իր կարծիքով գալրոցը այն պատճառով առաջ չէ գնում որ իւրաքանչիւր աշակերտը տարեկան 10 ռուբլի է տալիս ուսման վարձ, իսկ դա չքաւորների համար չատ թանդ է։ Այդ է պատճառը որ երեք տարվայ ընթացքում գալրոցի աշակերտների թիւը 50-ից չէ անցնում։ Վերջը տեսուչը հրաւիրեց հասարակութեանը հետեւեալ կարգադրութիւնն անել. թող իւրաքանչիւր տունը տարեկան մի մի ռուբլի փող յատկացնի ուսումնարանի օգտին, որպէս զի ուսումնարանը հաստատ եկամուտի աղբիւր ունենայ և այդպիսով աղքատներն էլ կարողանան կարգացնել տալ իրանց որդկերանց։

Տեսչի այդ խօսքերին հասարակութիւնը պատասխանեց։ «Բաւական է ինչքան մեր աղքատ դրպանից անթիւ կոպէկներ են մտել Շուշու հոգևոր գալրոցը, չը նայելով որ մեր զաւակներից ոչ մինը այնտեղ չէ կարդացել մինչև այսօր. թող հոգևոր իշխանութիւնը բարեհաճի Չիբրայիլի գաւառի հայ գիւղերի սրբազրամի և ուխտատեղեաց եկամուտները յատկացնել մեր ուսումնարաններին, այնուհետև մեր ուսումնարանների պակասող գրամը մենք կը լրացնենք աշակերտատէրերից պահանջելով։ Եւ այն ժամանակ մենք ուրիշ հոգաբարձուներ չենք էլ ընտրի, այլ կը խնդրենք դարձեալ նոյն հոգաբարձուներին կրկին իրանց պաշտօնն ընդունել, չը նայելով որ նրանք հրաժարական տուեցին. բայց մենք նրանցից գոհ ենք»։ Վերջապէս ինչով է մեղաւոր աղքատ գիւղացին, որ միշտ պէտք է օգնի իր միջոցներով հարուստ քաղաքացուն, ասում էր ժողովուրդը։

Անցեալ տարվայ օգոստոս ամսին Հատրուտի այգիները կարկտահարվեցան։ Զմեռն էլ այս տարի սովորականից դուրս ցուրտ էր։ Եւ այսօր, չը նայելով որ գարուն է բացվել, կարկտահար ծառերի մատաղ ճիւղերը բոլորովին չորացած են։

Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են որ այդտեղի փոստատան կառավարիչը չատ անքաղաքավարի կերպով է վարվում փոստին այցելողների հետ։ Նորերումս պարոնը չատ կօպիտ պատասխանեց մի երիտասարդին, որ եկել էր հարցնելու թէ փոստը հասել է թէ ոչ։ Ասում են երիտասարդը դանդատ է տալիս փոստի կառավարչի դէմ։

—

Այս օրերս Հալաբարի յետընկած փողոցներից մինում աւազակները յարձակվել են այդտեղի մի առամնաբոյժի վրա, խլել են նրա ժամացոյցը, կողոպտել են չորերը և ծեծել են նրան։ Երիտասարդ առամնաբոյժը մերձ ի մահ հիւանդ է։

—

Լսում ենք որ պ. Գ. Սարումեան ստորագրութիւն է բացել Հալաբարում մնռած հայ մշակների ընտանիքների օգտին։ Ժողովուրդը մեծ համակրութիւնամբ է վերաբերվում դէպի այդ հանգանակութիւնը։

—

Լսում ենք որ Թիֆլիսի Բարեգործական ընկերութիւնը պատրաստել է արդէն մէջի մշակների փոխադարձ օգնութեան դանձարանի կանոնադրութեան ծրագիրը, որ և պէտք է շուտով ներկայացվի վարչութեան հաստատութեանը։

—

Մեզ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ որ այդ նահանգի հայ բողոքականների մի գիւղ, բաղկացած երեսուն տունից, թոյլատրութիւն է ստացել գաղթել դէպի Կարսի նահանգը, որտեղ և ստացել է հողեր։

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են «Սուրմալուի գաւառի մէջ հողերի քչութեան պատճառով, հայ երկրագործներից ոմանք գաղթում են դէպի Կարսի նահանգը։»

—

Լրագիրները հաղորդում են որ մայիսի 11-ին, առաւօտեան 10 ժամին, կոմս Լորիս-Մէլիքով հասաւ Ս. Պետերբուրգ Վարշաւա-Պետերբուրգեան երկաթուղով։ Կայարանում կոմսին ընդունեցին նրա որդիները, ազգականները և ծանօթները։ Դէմքով կոմսը գրեթէ չէ փոխվել, չը նայելով որ հիւանդ է եղել։ Ասում են որ կոմս Լորիս-Մէլիքով կը մնայ Ս. Պետերբուրգում մի քանի օր, կը թողնի այդտեղ իր ընտանիքը և ապա կը վերադառնայ Գերմանիա, որտեղ դարձեալ մի քանի շաբաթ կը մնայ Էմս քաղաքում բժշկվելու համար։ Այնուհետև կոմսը կը վերադառնայ Ս. Պետերբուրգ։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ աչքի առաջ ունենալով Բաղու-Թիֆլիսեան երկաթուղու գրաֆիկը, Ղարսի նահանգի Ալեքսանդրապոլ գաւառի Սիմնեաց իշխան Դաւիթ-բէկը Ղափանի կողմերում հրաչքներ էր գործում։ Մահմեդական տիրապետողների բերդերը մինը միւսից յետոյ ընկնում էին նրա ահեղ զօրութեան առջև։ Հալիձորի բերդի պաշարման ժամանակ մի բուռն քաջերով ցրվեց նա օսմանցիների աւելի քան քսան հազար զօրքերը *)։ Ղափանը, Բարգիւշատը, Զանգուրը, Գենուազը և Գողթանը բոլորովին մաքրեց օսմանցիներից, խլեց նրանցից Մեղրի և Օրդուբատ քաղաքները։ Այդ բոլորը լսելով պարսից Շահ-Թահմասը, **) թէ որքան նա օգնեց իրան, պատերազմելով Պարսկաստանի թշնամիների հետ, վարձատրեց քաջի յաղթութիւնները, զանազան արտօնութիւններ չնորհելով Դաւիթ-բէկին։ Նա ուղարկեց բէկին մի դրօշակ, մի պատուական նժոյգ ձի և թագաւորական ֆիրմանով հաստատեց, որ նա ժառանգաբար իր տիրած երկրների տէրը և իշխանաց-իշխանը լինի. նա իրաւունք տուեց բէկին իր անունով դրամ կտրելու։ Բայց յանկարծակի մահը թոյլ չը տուեց այդ հերոսին երկար վայելելու իր յաղթութիւնների փառքը... 1728 թվին դաւաճանի թոյնը նրան գերեզման տարաւ։ Մի և նոյն տարվայ մէջ մեռան Ղարաբաղի երեք նշանաւոր գործիչները՝ Մէլիք-Բէգլարեան Աբով II-ը, Մէլիք-Իսրայէլեան Մէլիք-Եսային և Գանձասարի Եսայի կաթողիկոսը։ Մէլիք-Աբովին յաջորդեց իր որդի Մէլիք-Իսուրը, Եսայի կաթողիկոսին յաջորդեց Երիցմանկանց վանքի Ներսէս կաթողիկոսը, իսկ Մէլիք-Եսայուն յաջորդեց իր եղբայր Ալլահ-Ղուլին, որ իր քաջագործութիւնների համար Նադիրից ստացաւ սուլթանութեան տիտղոսը և կոչվեցաւ Ալլահ-Ղուլի-սուլթան։

Նադիրը, յաջողութեամբ առաջ տանելով իր արշաւանքները, մի քանի տարվայ մէջ հետզհետէ խլեց այն բոլոր պարսկական նահանգները, որ օտարները և օսմանցիները տիրել էին (Արտաստանը, Դարիչկանը, Երևանը, Վրաստանը,

---

*) Նադիրը կոչվում է և Թահմազ-Ղուլի-խան. նա սկզբում մի հասարակ աւազակապետ էր, ասպատակութիւններ էր գործում խօրասանի անապատներում. յետոյ Շահ-Թահմասի մօտ զօրապետ և ապա ընդհանուր սպարապետ դարձաւ. վերջը Շահ-Թահմասին սպանել տալով, ինքը թագաւոր եղաւ։

*) Ամ 1881 թվի ճանապարհորդութեան ժամանակ, Աւետարանոց գիւղում լինձ յաջողվեցաւ տեսնել մի հրաշալի գրչագիր աւետարան, որ գրված էր նոյն Գայիանէի ձեռքով։

**) «Այս է տապան Մէլիք Շահնազարի որդի Մէլիք Յուսէյնին. թվ. ռ. ճ. ձ. ե. 1185 (1736)։ «Ողեմ բանս գովեստի ի վերայ Մէլիք Յուսէյնի, զոր գրեցի այս տապանի. սա էր տէր երկրին Վարանդի. եռեսուն և հինգ մասն գեղի. սա էր հացով սեղանով լի. ողորմէր ամէն աղղի. կերպարանօքն էր գովելի. սա ոչ եւ հարկ թագաւորի. ամուր պարիսպ էր աշխարհի. թագ պարծանք հայոց ազգի. պատերազմեաց հեռաւոր ամանցի. յոյժ կոտորեաց ազգէն տաճկի»։

*) Պատմութեան մէջ 70 հազար է նշանակված. այդ թիւը չափազանց է։

**) Պէտք չէ մոռանալ, որ մինչև Շահ-Թահմասի սպանվիլը, Նադիրը չահի սպարապետն էր. Շահի մահից յետոյ նա թագաւոր դարձաւ։

*) Անա խաթունը Ցիզակի դաւառի մէլիք Աւանի (մէլիք Եգանի) քոյրն էր, նոյն անձի, որ սալքեց ընդհանուր ապստամբութիւնը։

նարանը բովանդակվում էր հետեւեալ խօսքերի մէջ. «պահպանեցէք հին սերմերը, որպէս բուսնելու յոյս տուողներ, և ոչնչացրէք նորը, որ պտուղ չէ խոստանում»։ Այսինքն խնայել պարսիկներին և կոտորել օսմանցիներին։ Կոտորածը պէտք է կատարվէր մեծ պասի առաջին գիշերվայ մէջ։ Այդ բարթօղոմեան գիշերում հայերը ոչնչացրին թէ Ղարարաղի և թէ Գանձակի կողմերում գտնված բոլոր օսմանցի զօրքերին։ Զմեռվայ ցրտի պատճառով զինուորները հայերի տներումն էին բնակվում։ Ամէն մի տան տէր սպանեց իր ինքնակոչ հիւրին։ Սարի-Մուստաֆայ փաշան հազիւ կարողացաւ ազատվել, փախչելով Երևան։ Այդ յիշատակի արժանի անցքը կատարվեցաւ 1733 թ.։

Որպէս մի փոքրիկ միջնավէպ, ես աւելորդ չեմ համարում նկարագրել մի դէպք, որ նոյն գիշերը տեղի ունեցաւ Վարանդայի Աւետարանոց գիւղում։ Դրա մէջ փայլում է հայ կնոջ հերոսութիւնը։ Աւետարանոցը Վարանդայի մէլիքութեան բերդատեղն է։ Այստեղ իր զինուորներով դեռեղված էր օսմանցիների զօրապետներից մէկը, որ կոչվում էր Սուլէյման բէկ։ Դա լսելով տեղային մէլիք-Յուսէյնի դստեր՝ Գայիանէի դեղեցկութիւնը, մտածում է տիրապետել նրան։ Բայց չը համարձակվելով յայտնի բռնութիւն գործ դնել, առաջարկում է ամուսնանալ Գայիանէի հետ։ Հայրը և մայրը անպատկառ մահմեդականին միամտացնելու համար խոստանում են տալ աղջիկը, բայց միշտ յետաձգում են, յայտնելով, թէ հայերի ազգային և կրօնական սովորութիւնների համեմատ պէտք է դեռ ևս այս և այն ծէսերը կատարված լինեն։ Այսպէս օրըստօրէ ժամանակ են խլում, մինչև հասնում է նշանակեալ գիշերը։ Սկսվում է կոտորածը։ Մէլիք-Յուսէյնը այն գիշերը տանը չէ լինում. նա գնացել էր իր գաւառի միւս տեղերում գործելու համար։ Աւետարանոցի կոտորածին առաջնորդում էր նրա քաջասիրտ կինը՝ Անանա խաթունը *)։ Երբ այդ զինված հերոսուհին աւանի փողոցների մէջ կոտորել էր տալիս օսմանցիներին, այդ միջոցին նրա ինքնակոչ փեսացուն՝ Սուլէյման-բէկը, իր կեանքը ազատելու համար, փախչում է դէպի Անանա խաթունի տունը։ Նոյն րոպէում Գայիանէն, նոյնպէս զինված, կանգնած է լինում տան դռան մօտ։ Տեսնելով իր ատելի փեսացուին ներս մտնելիս, օրիորդը իր խէնջարը խրում է նրա սրտի մէջ... Այդ սպանութիւնից յետոյ Գայիանէն իր անձը նուիրեց կուսակրօնութեան և մտաւ Աւետարանոց գիւղի կուսանաց անապատը *)։

Անանա խաթունի և Գայիանէի քաջագործութեան յիշատակը պահպանված է միայն ժողովրդական աւանդութեան մէջ, իսկ Մէլիք-Յուսէյնի յիշատակը մնում է արձանագրված իր գերեզմանի քարի վրա, որը գտնվում է աւետարանոց գիւղի կուսանաց անապատի գաւթում **)։

Ղարաբաղի մէլիքների կռիւները օսմանցիների հետ մի մեծ տեղ են բռնում այդ ժամանակի պատմութեան մէջ, որը դեռ ևս ոչ ուսումնասիրված է և ոչ տպագրված։ Մինք այժմ այսքանը միայն կասենք, որ հայերը սրի ուժով մաքրելով իրանց հայրենիքը օսմանցիներից, բաւական հեշտացրին Նադիրի յաղթութիւնները օսմանցիների դէմ, և պարսիկ սպարապետը թագաւոր դառնալուց յետոյ, որպէս կը տեսնենք, չը մոռացաւ հայոց մէլիքների ծառայութիւնները, նա աւելի երախտամտոյց գտնվեցաւ, քան թէ քրիստոնեայ կայսրները։

Մինչ Ղարաբաղում հայոց մէլիքները ջարդում էին օսմանցիներին, հէնց մի և նոյն ժամանակներում Սիմնեաց իշխան Դաւիթ-բէկը Ղափանի կողմերում հրաշքներ էր գործում։ Մահմեդական տիրապետողների բերդերը մինը միւսից յետոյ ընկնում էին նրա ահեղ զօրութեան առջև։ Հալիձորի բերդի պաշարման ժամանակ մի բուռն քաջերով ցրվեց նա օսմանցիների աւելի քան քսան հազար զօրքերը *)։ Ղափանը, Բարգիւշատը, Զանգուրը, Գենուազը և Գողթանը բոլորովին մաքրեց օսմանցիներից, խլեց նրանցից Մեղրի և Օրդուբատ քաղաքները։ Այդ բոլորը լսելով պարսից Շահ-Թահմասը, **) թէ որքան նա օգնեց իրան, պատերազմելով Պարսկաստանի թշնամիների հետ, վարձատրեց քաջի յաղթութիւնները, զանազան արտօնութիւններ չնորհելով Դաւիթ-բէկին։ Նա ուղարկեց բէկին մի դրօշակ, մի պատուական նժոյգ ձի և թագաւորական ֆիրմանով հաստատեց, որ նա ժառանգաբար իր տիրած երկրների տէրը և իշխանաց-իշխանը լինի. նա իրաւունք տուեց բէկին իր անունով դրամ կտրելու։ Բայց յանկարծակի մահը թոյլ չը տուեց այդ հերոսին երկար վայելելու իր յաղթութիւնների փառքը... 1728 թվին դաւաճանի թոյնը նրան գերեզման տարաւ։ Մի և նոյն տարվայ մէջ մեռան Ղարաբաղի երեք նշանաւոր գործիչները՝ Մէլիք-Բէգլարեան Աբով II-ը, Մէլիք-Իսրայէլեան Մէլիք-Եսային և Գանձասարի Եսայի կաթողիկոսը։ Մէլիք-Աբովին յաջորդեց իր որդի Մէլիք-Իսուրը, Եսայի կաթողիկոսին յաջորդեց Երիցմանկանց վանքի Ներսէս կաթողիկոսը, իսկ Մէլիք-Եսայուն յաջորդեց իր եղբայր Ալլահ-Ղուլին, որ իր քաջագործութիւնների համար Նադիրից ստացաւ սուլթանութեան տիտղոսը և կոչվեցաւ Ալլահ-Ղուլի-սուլթան։

Նադիրը, յաջողութեամբ առաջ տանելով իր արշաւանքները, մի քանի տարվայ մէջ հետզհետէ խլեց այն բոլոր պարսկական նահանգները, որ օտարները և օսմանցիները տիրել էին (Արտաստանը, Դարիչկանը, Երևանը, Վրաստանը,

---

*) Պատմութեան մէջ 70 հազար է նշանակված. այդ թիւը չափազանց է։

**) Պէտք չէ մոռանալ, որ մինչև Շահ-Թահմասի սպանվիլը, Նադիրը չահի սպարապետն էր. Շահի մահից յետոյ նա թագաւոր դարձաւ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽԱՄՍԱՅԻ ՄԷԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐ

—

VIII.

Նադիրը *) յայտնվեցաւ այն ժամանակ, երբ, որպէս տեսանք վերևում, Պարսկաստանը բաժանված էր եղած և պարսից գահի վրա նստում էին օտարները։ Պարսկաստանի մի մասին տիրում էին աւղանները, մի մասը դրաւել էին ռուսները, իսկ պարսկական Հայաստանը, Վրաստանը և մի քանի այլ նահանգներ օսմանցիների ձեռքումն էին։

Նադիրը յայտնվեցաւ ինչպէս մի կատաղի փոթորիկ, որը զօրաւոր ձեռքով նախ մաքրեց Պարսկաստանը աւղաններից, տիրեց Հնդկաստանի մի մասը, յետոյ իր սուրը դարձրեց օսմանցիների դէմ։ Նրա զարմանալի յաջողութիւնները նոր ուժ, նոր խրախոյս ներշնչեցին Ղարաբաղի հայոց մէլիքներին։ Այդ վերջինները սկսեցին իրանց սեպհական ուժերով մաքրել իրանց հայրենիքը օսմանցիներից։

Այդ ժամանակ օսմանցիների սերասկէր (գլխաւոր հրամանատար) Սարի-Մուստաֆայ փաշան իր գլխաւոր բանակով զետեղված էր Գանձակ քաղաքում, իսկ մնացած զօրքերը տարածել էր Ղարաբաղի մէլիքների երկրներում։ Մէլիք-Աւանը, որ բոլոր միւս մէլիքների գահերէցն էր, օգուտ քաղելով փաշայի դէպի ինքն ունեցած բարեկամական յարաբերութիւններից, և առ երևս հնազանդութիւն ցոյց տալով, զաղտնի կերպով սարքեց մի մեծ դաւադրութիւն։ Ղարաբաղի բոլոր մէլիքները միաբանվեցան նրա հետ։ Ապստամբութեան նշան

---

*) Անանա խաթունը Ցիզակի դաւառի մէլիք Աւանի (մէլիք Եգանի) քոյրն էր, նոյն անձի, որ սալքեց ընդհանուր ապստամբութիւնը։

*) Իմ 1881 թվի ճանապարհորդութեան ժամանակ, Աւետարանոց գիւղում լինձ յաջողվեցաւ տեսնել մի հրաշալի գրչագիր աւետարան, որ գրված էր նոյն Գայիանէի ձեռքով։

**) «Այս է տապան Մէլիք Շահնազարի որդի Մէլիք Յուսէյնին. թվ. ռ. ճ. ձ. ե. 1185 (1736)։ «Ողեմ բանս գովեստի ի վերայ Մէլիք Յուսէյնի, զոր գրեցի այս տապանի. սա էր տէր երկրին Վարանդի. եռեսուն և հինգ մասն գեղի. սա էր հացով սեղանով լի. ողորմէր ամէն աղղի. կերպարանօքն էր գովելի. սա ոչ եւ հարկ թագաւորի. ամուր պարիսպ էր աշխարհի. թագ պարծանք հայոց ազգի. պատերազմեաց հեռաւոր ամանցի. յոյժ կոտորեաց ազգէն տաճկի»։

թուղու առաջիկայ վերջանալը, չոգենաւային ընկերութիւնը «Կովկաս և Մէրկուրի» կարգադրել է հաստատել Կասպից ծովի մէջ չոգենաւերի ուղղակի երթևեկութիւնը Աստրախանի և Բաքուի մէջ:

—

«Русскій Курьеръ» լրագրին հեռագրում են որ կոմս Լօրիս-Մէլիքով մայիսի 13-ին գնաց Պետերգոֆ:

—

Երկուշաբթի, մայիսի 17-ին Հալաբարի Ս. Մարիամեան օրիորդաց դպրոցի վարչութեան կարգադրութեամբ պ. Ներսիսեան Հալաբարի քաղաքային դպրոցի դահլիճում տուեց երկրորդ ներկայացումն, ծանօթացնելով հասարակութեանը գիտութեան ամենանոր գիւտերի հետ: Այս անգամ պ. Ներսիսեան ցոյց տուեց կախարդական լապտերը: Այդ երեկոյ, ներկայացման ժամանակ ածում էին տեղական երաժիշտները և երգում էին աղգային երգեր: Բայց դահլիճը շատ փոքր լինելով և հասարակութիւնը բաւական չյցելելով այդ ներկայացումները, երկու ներկայացումից էլ ոչինչ օգուտ չը մնաց Մարիամեան դպրոցի համար:

—

Մայիսի 27-ին, հինգշաբթի օր, պ. պ. Աւալեանց և Աղայեանց տալու են հայ թատրոնական խումբի մասնակցութեամբ իրանց օգտին մի ներկայացում Արծրունու թատրոնում: Խաղալու են հանդուցեալ բժիշկ Տէր-Գրիգորեանցի «Նինոի նշնվիլը:» Ցոյս ունենք որ մեր հասարակութիւնը իր ներկայութեամբ կը յայտնի իր համակրութիւնը թէ դէպի ներկայացնողները և թէ դէպի պիէսան:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՇԽԱՆ ՕՐԼՕՎԻ ՑԱՑՏՆՈՒԹԻՒՆԸ

—

„Neue Freie Presse“ լրագրի Փարիզի թղթակիցը մայիսի 5-ից հաղորդում է իր խօսակցութիւնը, որ նա ունեցել է Փարիզի ռուսաց դեսպան իշխան Օրլովի հետ:

„Այն խօսակցութեան ժամանակ, որ ես ունեցայ ռուսաց դեսպան իշխան Օրլովի հետ, իշխանը յայտնեց, որ նրա կարծիքով, եւրօպական խաղաղութեանը դեռ երկար ժամանակների համար ոչինչ վտանգ չէ սպառնում: Ինքն իշխան Օրլով վերին աստիճանի խաղաղասէր մարդ է, բայց ստիպված է հերքել իր համար շողոքորթիչ այն կարծիքը, իբր թէ գենեռալ Սկոբելևի արտասանած ճառի գործած վատ տպաւորութենից յետոյ եւրօպական խաղաղութիւնը պահպանվեցաւ իր աշխատանքների շնորհիւ. խաղաղութեանը ոչ մի տեղ իսկական վտանգ չէր սպառնում: Ռուսաստանի պաշտօնական շրջանները, մանաւանդ թագաւոր Կայսրը երբէք չեն մոռացել պատերազմի մասին որ և է պետութեան հետ, իսկ ինչ կը վերաբերի Աւստրօ-Ունգարիային, կայսր Ֆրանց Յովսէփին ռուսաց պալատական շրջանները մեծ համակրութեամբ են վերաբերվում: Ժողովրդների մէջ ինչպէս ուրիշ երկիրներում, նոյնպէս և Ռուսաստանում ճշմարիտ է եղել են անբաւական մարդիկ, բայց նրանք անկարող էին ստիպել կառավարութեանը, որ նա դիմէր յարձակողական միջոցների: Իշխանի տեսակցութեանը գերմանական պետական կանցլերի հետ չափազանցրած նշանակութիւն տուին: Իշխան Օրլով արդէն 25 տարի ճանաչում է իշխան Բիսմարկին, նրա հետ շատ բարեկամ է և յոյս ունի մինչև մահ պահպանել այդ բարեկամութիւնը: Նա այցելում է իշխան Բիսմարկին ամեն անգամ, երբ կարող է և անկարելի է ենթադրել, որ նա ամեն անգամ քաղաքական յանձնարարութիւն ունենայ: Իշխան Օրլով Բիսմարկի հետ նայեց նոր տնկված գեղեցիկ անտառները և նրա հետ մի քանի ուրախ ժամեր անցկացրեց: Նա առիթ չունէր դիպլոմատիական բանակցութիւններ անել Բիսմարկի հետ, որովհետև, հակառակ տարածված լուրերի, կառավարութիւնների յարաբերութիւնները շատ բարեկամական էին: Այնուհետև խօսակցութիւնը Ռուսաստանի ներքին դրութեան մասին էր, որ չափազանց ցաւեցնում է իշխան Օրլովին: Նրան չափազանց զբաղեցնում է այդ դրութեան բարւոքման հարցը“:

—

ԹԻՒՐՔԻԱ

—

„Journal d’Orient“ լրագիրը գրում է: „Թիւրքաց Հայաստանի մէջ վերանորոգութիւնները յետաձգված են անորոշ ժամանակների: Մահմետական անձնիշխանութիւնը աւելի և աւելի տիրում է Հայաստանում ոյժ տալով հարստահարութեան և ապականութեան սիստեմային: Սուլթանը ծաղրում է եւրօպային, այն ժամանակից, երբ Պրուսիան նրա զօրքին տալիս է ուսուցիչ-զինուորներ: Հայերը աւելի քան որ և է ժամանակ ամեն տեսակ նեղութիւնների են ենթարկվում: Թիւրքիան շարունակում է այդ քրիստոնեայ ազգի ոչնչացման գործը մի առանձին եռանդով և ճարպիկութեամբ, որպէս զի կարողանայ ժամանակով պատասխանել այն պետութեանը որ համբերութիւն կը կորցներ. „ի զուր էք խօսում ինձ հետ Հայաստանի մասին, ես մինչև անգամ ոչ մի նահանգ էլ չունեմ որ հայերով բնակեցրած լինէր:“ Եւ եթէ եւրօպան շարունակի թոյլ գտնվել, Թիւրքիայի այդ խօսքերը կարդարանան, ասում է լրագիրը: Թիւրքիան, Վիէննայի ֆրանսիական լրագրի կարծիքով, կարող է այնտեղ հասցնել Հայաստանը, որ այդ երկրի մէջ ոչ մի հայ չի մնայ:

—

ԵԳԻՊՏՈՍ

—

Կայիրէից Փարիզի „Temps“ լրագրին հեռագրում են մայիսի 16-ից, որ եգիպտական խեդիվի հաշտութիւնը իր մինիստրների և անուանիների հետ կայացաւ Ֆրանսիական հիւպատոսի խորհրդով: Խեդիվը մայիսի 15-ին յայտնեց անուանիների ժողովի անդամներին, որ նա մոռացութեան է տալիս անբաւականութեան բոլոր շարժառիթները: Բոլոր մինիստրները պահպանեցին իրանց պաշտօնները: Խեդիվը յայտնեց, որ հայրենասիրութիւնը պահանջում է մոռացութեան տալ անցեալը: Մահմուդ-Բարուդի և Արաբի-փաշա հաւատացրին խեդիվին, որ նրանք անհրաժեշտ են համարել նրա հետ համաձայնութեամբ գործել: Անուանիների ժողովի նախագահ Սուլթան-փաշա շնորհաւորեց խեդիվին մինիստրների հետ համաձայնութեան վերականգնելը: Դրանից յետոյ բոլոր մինիստրները և նշանաւոր զինուորականները հաւաքվեցան Մահմուդ-Բարուդիի մօտ, որտեղ բազմաթիւ հայրենասիրական ճառեր արտասանվեցան: Մահմուդ-Բարուդի շնորհակալութիւն յայտնեց զինուորականներին և ասեց, որ մինիստրական դժուարութիւնների ժամանակ երկրի մէջ կատարեալ հանգստութիւն պահպանվեցաւ և եւրօպացիները, տարածված լուրերի հակառակ, կատարեալ յարգանք էին վայելում: Արաբի-փաշա նոյնպէս մի ճառ արտասանեց, ի միջի այլոց խորհուրդ տուեց եգիպտական զօրքերին այսուհետև էլ պահպանել հանգստութիւնը աշխարհի համակրութիւնը ստանալու համար:

Անգլօ-ֆրանսիական միջամտութիւնը եգիպտական գործերում դեռ ևս պահպանում է իր անորոշ բնաւորութիւնը, գրում է „Голосъ“ լրագիրը: Մինչև այժմ դեռ միջոց

Գանձակը և այլն): Նրա յաղթութիւնները երկիւղի մէջ դրին մինչև անգամ ռուսաց կառավարութեանը, որը առանց պատերազմի, Աննա Իվանովնա կայսրուհու օրերում (1732—1735), վերադարձրեց Նադիրին Պետրոս մեծի գրաւած բոլոր պարսկական գաւառները (Գիլանը, Մազանդարանը, Աստրաբատը, Բաքուն և Դէրբենդը:)

Իր յաղթութիւնները փառաւոր կերպով կատարելուց յետոյ, 1736 թ. ձմեռը, Նադիրը բանակ դրեց Երասխ գետի մօտ, Մուղանի լայնատարած անապատում: Այն տեղ կանչված էին Պարսկաստանի բոլոր նահանգապետները, այնտեղ էր Կախեթիայի վալին՝ Իմամղուլի-խանի (Դաւիթ III) որդի մահմեդականացած Ալի-Միրզայ-խանը, այնտեղ հրաւիրված էր Էչմիածնի Աբրահամ կաթողիկոսը *) և Ղարաբաղի Ներսէս կաթողիկոսը, այնտեղ էին Ղարաբաղի, Նախիջևանի, Երևանի հայոց բոլոր մէլիքները և քալանթարները, այնտեղ էր Թիֆլիսի իշխան Մէլիք Աշխալ-բէկի որդի Աղա-բէկը, (իշխան Բէհբուդեանների պապը) որը մասնակցեց Նադիրի հնդկական արշաւանքներին:

Նոյն տարվայ փետրվար ամսում, Մուղանի անապատում, կատարվեցաւ Նադիրի թագադրութեան հանդէսը: Հայոց Աբրահամ կաթողիկոսը օրհնեց նրա սուրը և իր ձեռքով կապեց պարսից նոր թագաւորի մէջքին:

Թագադրութիւնից յետոյ, Նադիր-շահը այնտեղ հաւաքված աւագներին զանազան պաշտօններ և աստիճաններ շնորհելու ժամանակ, վարձատրեց և հայոց մէլիքների կատարած քաջագործութիւնները, որոնք այնքան եռանդ էին ցոյց տուել օսմանցիներին կոտորելու գործում: Առանձին ֆիրմաններով նրանց կրկին հաստատեց իրանց հայրենական իշխանութիւնների մէջ, իրաւունք տալով իւրաքանչիւրին անկախ կերպով կառավարելու երկիրը, վճարելով ամեն տարի մի որոշեալ քանակութեամբ հարկ: Այնուհետև մէլիքները կախումն ունենալով միայն շահից, իսկ իրանց իշխանութեան մէջ վայելելով ինքնավարութեան կատարեալ իրաւունքներ, որպէս վալիներ (աւատական իշխաններ) աւելի հանգիստ և ապահով դրութիւն ստացան և սկսեցին աւելի ևս զօրացնել իրանց ուժերը:

Մի քանի մէլիքներ առանձին աստիճաններ ստացան: Զրաբերդի Մէլիք-Իսրայէլի որդի Մէլիք-Ալլահ-Ղուլին ստացաւ սուլթանի աստիճան *) և կոչվեցաւ Ալլահ-Ղուլի-սուլթան: Շահի առանձին շնորհը վայելում էր Տիզակ գաւառի Մէլիք-Աւանը (Եգանը), որին Շահը «Բաալըղ» էր կոչում, որ նշանակում է հոգևոր հայր: Մէլիք-Աւանը Ղարաբաղի մէլիքների գահերէցն էր. դա մի ամբողջ տարի իր ծախքով կերակրեց Շահի զօրքերին. դա էր պարագլուխը մեր վերև յիշած սարսափելի կոտորածի, որով մի գիշերվայ մէջ հայերը ոչնչացրին Ղարաբաղում գտնված բոլոր օսմանցիներին: Շահը շնորհեց նրան խանութեան աստիճան, կոչվեցաւ Մէլիք-Աւան-խան և կարգեց Խամսայի հինգ մէլիքութիւնների գլխաւոր. դրա մօտ էին հաւաքվում վճարելիք հարկերը և դրա ձեռքով էին յանձնվում արքունի գանձարանին:

Երբ Յովհաննէս կաթողիկոսը Մուղանի անապատում, Շահի խնդրելով, Երասխ գետի ափի մօտ կատարեց սուրբ Ծննդեան և Մկրտութեան տօնի հանդէսը, ներկայ էին բացի քրիստոնեաներից մինչև երեք հարիւր պարսիկ ազնուականներ, Շեյխուլիսլամը, դաղին և այլ նշանաւոր անձինք: Բոլորի մէջ միայն Մէլիք-Աւան-խանը արժանացաւ այն պատուին, որ խաչը ջրից դուրս հանեց:

Աւելորդ չեմ համարում յիշել մի փոքրիկ դէպք, որը ինքն ըստ ինքեան թէև շատ ծաղրական է, բայց ցոյց է տալիս, թէ որ աստիճան հայոց այդ աւագը մտերիմ և բարեկամ էր Պարսկաստանի ահարկու թագաւորին:

Նադիր-Շահը սովորութիւն ունէր շուտ-շուտ ճաշել Մէլիք-Աւան-խանի տանը, որի ճոխ սեղանը հռչակված էր, թէ այնտեղ ամեն բարիք կարելի է գտնել: Մի անգամ Շահը կամենալով փոքր ինչ ամաչացնել իր հիւրնկալին, պատուիրեց ճաշի համար թարմ սունդ պատրաստել: Թէև ձմեռն էր, թէև տարվայ այն ժամանակին Ղարաբաղի անտառներում թարմ սունդ գտնելը անկարելի բան էր, այսու ամենայնիւ, Մէլիք-Աւան-խանը ցոյց տուեց, թէ շահի փափագը կատարված կը լինի: Ճաշի ժամանակ, երբ թագաւորը պահանջեց ցանկացած կերակուրը, մէլիքի սպասաւորները դրեցին նրա առջև մի մատուցարան, լիքը դրված ոսկիներով:—Ես սունդ էի պատուիրել, ասաց շահը:—Մենք առանց սունդի ևս կարող ենք կըշտանալ, պատասխանեց մէլիքը,—իսկ ձեր զինուորներին ոսկի է հարկաւոր թշնամու հետ պատերազմելու համար: Շահին խիստ հաճոյ թուեցաւ մէլիքի պատասխանը և ընդունեց ոսկիները:

Մէլիք-Աւան-խանը յարգված էր և ռուսաց կառավարութիւնից: Աննա Իվանովնա կայսրուհու թագաւորութեան ժամանակ (1734) նա իր աստիճանաւորներով գնաց Ռուսաստան, փառաւոր ընդունելութիւն գտաւ և արժանացաւ կայսրուհու առանձին ուշադրութեանը: Պետրոս մեծի պարսկական արշաւանքների ժամանակ, իր ցոյց տուած նշանաւոր ծառայութիւնների համար Մէլիք-Աւան-խանը ստացաւ գեներալ-մայորի աստիճան և զանազան չքանշաններ: Նրա ամբողջ սվիտային նոյնպէս աստիճաններ, չքանշաններ շնորհեցին և թոշակ նշանակեցին:

Յետոյ Ելիսաւետա Պետրովնա կայսրուհու թագաւորութեան ժամանակ, Մէլիք-Աւան-խանը, արդէն ծերացած հասակում, կրկին անգամ գնաց Ռուսաստան, իր ընտանիքը իր հետ տանելով: Ղարաբաղի երևելի տիրապետողը կրկին անգամ արժանացաւ զանազան չքանշանների և պատուի, թէև նրա այցելութիւնների նպատակը իր անձնական փառասիրութիւնը չէր, այլ նա աշխատում էր իր դժբախտ հայրենիքի փրկութեան համար: Մեծն Պետրոսի օգոստափառ դուստրը ցանկացաւ ծերունի հերոսին անձամբ տեսնել Ս. Պետերբուրգում և նշանակեց առանձին audիենցիա: Գրաֆ Մինիխը և գրաֆ Բաղումովսկին Մէլիք-Աւան-խանին իր ամբողջ ընտանիքի հետ ներկայացրին կայսրուհուն: Ընդունելութեան ժամանակ կայսրուհին տեսնելով մի մանկահասակ գեղեցկուհի, որը մէլիքի թոռն էր, այնքան սիրեց նրան, որ ցանկացաւ պահել իր արքունիքում իբրև պալատական օրիորդ (ֆրեյլէյն): Մինչև Աւան-խանի Ս. Պետերբուրգից հեռանալը, կայսրուհին պահեց նրան իր պալատում, և միայն ծերունի մէլիքի շատ խնդրելու համար, թոյլ տուեց օրիորդին, որ իր ծնողների հետ վերադառնայ իր հայրենիքը, պարգևելով նրան շատ ընծաներ:

Վերադառնալով իր հայրենիքը՝ Տիզակ, Մէլիք-Աւան-խանը երկար չապրեց. նա վախճանվեցաւ 1744 թ. և մարմինը թաղվեցաւ իր Տող անունով բերդի եկեղեցու գաթում: Նրա մահից յետոյ, երեց որդին մէլիք-Ադամը միայն մի տարի իշխեց և մեռաւ, յետոյ իշխանութիւնը ձեռք առաւ կրտսեր եղբայրը Մէլիք-Եսային, որը, ինչպէս յետոյ կը տեսնենք, սպանվեցաւ Շուշիի Իբրահիմ-խանի դաւաճանութեամբ: Մէլիք-Աւան-խանի ժառանգների մեծ մասը դաւաճանութեան զոհ եղան: Այդ էր պատճառը, որ նրա այրի կինը՝ Գոհար-խանումը (ханша) ստիպված եղաւ թողնել իր հայրենիքը և մնացած զաւակների հետ գաղթել Աստրախան, որտեղից իր բնակութիւնը տեղափոխեց Ղզլար, երբ այդ քաղաքը շինվեցաւ: Մէլիք-Աւան-խանի և նրա եղբօր ժառանգներից առաջ եկան իշխան Սումբատեանները, իշխան Մէլիքովները և Հայրապետեանները, որոնք մի ժամանակ Աստրախանում, Ս. Պետերբուրգում և Մոսկվայում ռուսաց նշանաւոր պաշտօնների մէջ մտան:

(Կը շարունակվի)

*) Աբրահամ կաթողիկոսը, որ կոչվում էր կրիտացի, վայելում էր Նադիրի առանձին սէրը և համակրութիւնը: Պարսից քաջ զօրապետը նրա մօտ հիւր եղաւ Էչմիածնի վանքում, և իր արշաւանքների ժամանակ, Հայաստանի և Վրաստանի կողմերում, նրան չէր հեռացնում իր բանակից: Այդ հեշտացրեց կաթողիկոսին աւելի մօտից ծանօթանալ նրա գործողութիւնների հետ և օրագրութեան ձևով թողեց մեզ մի հետաքրքիր պատմութիւն, որ կոչվում է «Աբրահամ կաթողիկոսի կրիտացւոյ պատմագրութիւն անցիցն իւրոյ և Նադիր-Շահին պարսից», տպված Էչմիածնում 1870 թ.

*) Սուլթան չը պէտք է հասկանալ այն մտքով, ինչ նշանակութիւն որ ունի այժմ Թիւրքիայում: Սուլթանը այժմեան Պարսկաստանում զինուորական աստիճան է, իսկ Նադիրի ժամանակ այդ տիտղոսը տրվում էր առանձին գաւառների կամ փոքրիկ վիճակների տիրապետողներին:

չը կայ հասկանալու, թէ խեդիվի յայտնի հաշտութիւնից յետոյ իր մինիստրների հետ անգլիական և ֆրանսիական նաւատորմները ի՞նչ են մտադիր անել եգիպտական ջրերի մէջ։ Մի և նոյն ժամանակ մի քանի կիսապաշտօնական լրագիրների յայտնած անբաւականութիւնից երևում է, որ եւրոպական միացած պետութիւններին շատ հաճելի չէ անգլիական և ֆրանսիական նաւատորմների երևալը Ալէքսանդրիայի առաջ։ Անգլիային և Ֆրանսիային ամեն կողմից և ամեն տեսակ ձևերով, սկսած դեսպանների դիպլօմատիական հաղորդութիւններից մինչև մինիստրների արտասանած պարլամենտական ճառերի ակնարկութիւնները, յիշեցնում են, որ եգիպտական հարցը պէտք է ենթարկվի ամբողջ Եւրոպայի հսկողութեանը և ոչ թէ միայն մի քանի կառավարութիւնների։

Այս բոլորը հակասում է լորդ Գրենվիլի յայտնութիւններին լորդերի ժողովում, որոնց մասին հեռագիրը մեզ շատ կարճառօտ տեղեկութիւններ հաղորդեց։ Այժմ աչքի առաջ ունենալով բրիտանական լորդերի ժողովի մայիսի 15-ի նիստի ամբողջ հաշիւը, մենք տեսնում ենք, որ անգլիական արտաքին գործերի մինիստրի խօսքերի համեմատ, անգլօ-ֆրանսիական նաւատորմը ուղարկված է Եգիպտոս ոչ թէ միայն եւրոպական պետութիւնների համաձայնութեամբ, այլ և նրանց կատարեալ հաւանութեամբ։ Լորդ Գրենվիլ հետևեալ կերպով մեկնեց այն բանակցութիւնների պատմութիւնը, որի հետևանքը անգլօ-ֆրանսիական նաւատորմի ուղարկելն էր եգիպտական ջրերը։

Անգլիան և Ֆրանսիան դիմեցին պետութիւններին միանման շրջաբերականով, որի մէջ յայտնված էր, թէ անգլիական և ֆրանսիական կառավարութիւնները վճռել են պաշտպանել խեդիվի իշխանութիւնը Եգիպտոսի մէջ և պահպանել միջազգային դաշնագրութիւնները։ Բոլոր պետութիւնները, որոնց թւում և Թիւրքիան, հաւանութիւն տուին այդ շրջաբերականի մէջ յայտնած նախագծին։ Դրանից յետոյ ֆրանսիական և անգլիական կառավարութիւնները վերջնական համաձայնութիւն կայացրին այն միջոցների մասին, որ պէտք էր գործադրել, որպէս զի եգիպտական կառավարութիւնը չը կարողանար խախտել իր միջազգային պարտականութիւնները։ Այդ գործը այն պատճառով կատարվեցաւ, որ եւրոպական պետութիւնները ճանաչեցին Ֆրանսիայի և Անգլիայի առաջնակարգ դրութիւնը եգիպտական հարցի վերաբերութեամբ և գործի սկզբնաւորութիւնը յանձնեցին յիշեալ երկու պետութիւններին, պայմանաւորելով, որ եգիպտական գործերի այժմեան դրութիւնը ոչ մի կերպ չէ կարող փոփոխված լինել առանց եւրոպական պետութիւնների համաձայնութեան։ Ֆրանսիան և Անգլիան կատարելապէս համաձայնեցին այդ սկզբունքի հետ։

Լորդ Գրենվիլ այնուհետև յիշեցրեց, որ եգիպտական գործերի դրութիւնը բաւական լաւացել է այն ժամանակից, երբ անուանիների ժողովը և առհասարակ ժողովուրդը խեդիվի կողմը բռնեցին։ Անգլօ-ֆրանսիական նաւատորմը ուղարկված է եգիպտական ջրերը քաղաքական մի նախագիծ իրագործելու համար, որ ընդհանուր համաձայնութեամբ վճռել են Անգլիա և Ֆրանսիա։ Լորդ Գրենվիլ վերջացրեց իր ճառը յոյս յայտնելով, որ „ժողովրդների խաղաղութիւնը և բարօրութիւնը Եգիպտոսի մէջ կը վերականգնվի առանց զինւորված ոյժի միջամտութեան“։ Դրանով լորդ Գրենվիլ կամեցաւ յայտնել, որ հարկաւոր դէպքում զինւորված ոյժ էլ կը գործադրվի։

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ բրիտանական արտաքին գործերի մինիստրը այդպիսի բան չէր ասի, եթէ հաւատացած չը լինէր, որ նրա խօսքերը չի հերքի եւրոպական կառավարութիւններից ոչ մէկը, որ հետաքրքրված է եգիպտական հարցով։

Ուրեմն ինչ կը նշանակեն այն խօսակցութիւնները, թէ եւրոպական կառավարութիւնները չեն հաւանում անգլօ-ֆրանսիական միջամտութիւնը եգիպտական գործերին և գրեթէ բողոքում են այդ քայլի դէմ։

Այդ հակասութիւնը կարելի է մեկնել նրանով, որ եւրոպական պետութիւններից մի քանիսը եգիպտական ջրերը նաւատորմ ուղարկելու համար դժուարութեամբ համաձայնեցան և այն էլ այն պատճառով, որ նրանք ուրիշ պատրաստ միջոց չունէին եգիպտական խեդիվին պաշտպանելու համար։ Դէպքեր են լինում, երբ աւելի խելացի է լինում համաձայնվել այն գործի հետ, որին անկարելի է ընդդիմադրել, իսկ եգիպտական վերջին անցքերը հէնց այդպիսի դէպք էին ներկայացնում։ Բացի Ֆրանսիայից և Անգլիայից ոչ մի պետութիւն պատրաստ չէր ընդդիմադրել այն պատահարներին Եգիպտոսի մէջ, որոնք միատեսակ վնասակար էին ամբողջ Եւրոպայի համար։ Այդ պատճառով ուրիշ միջոց չէր մնում, եթէ ոչ այդ ընդդիմադրութիւնը յանձնել վերոյիշեալ երկու պետութիւններին։ Այժմ երբ իրագործվում է Եւրոպայի կողմից ակամայ հաւանած նախագիծը, սկսվում են սովորական ակնարկութիւնները և դիպլօմատիական բողոքները։ Ցաւալի է, որ եգիպտական հարցի լուծման համար եւրոպական պետութիւնները պատրաստ չէին։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Չը նայելով, որ անգլիական համայնքների ժողովը ստիպողական օրէնքը ընդունեց, Գլադստոն, «France» լրագրի խօսքերի համեմատ, դիտաւորութիւն ունի խաղաղասիրական քաղաքականութեան հետևել, և այդպիսով կասկածի ենթարկված բոլոր բանտարկվածներին ազատեց։ Օրինակ, վերջին օրերում բանտից արձակվեցաւ Կէլէգէր անունով մէկը, Կորկից, որը վեց ամիս առաջ բանտարկվեցաւ լիմէրիկեան բանտում։

—«Presse» լրագրին Հռոմից հեռագրում են, մայիսի 9-ից, որ այդ օրը այնտեղ բացվեցաւ հինգերորդ միջազգային գրականական կօնգրէսը, որի նիստերը լինում են Կապիտօլիայի դահլիճներից մէկի մէջ։ Ֆէրրարի բացեց կօնգրէսի նիստը ֆրանսերէն լեզուով։ Նա ողջունեց կօնգրէսի իտալական և օտարազգի անդամներին, շնորհակալութիւն յայտնեց քաղաքային վարչութեանը իր հիւրասիրութեան համար և վերջացրեց իր ճառը իտալերէն լեզուով, ցանկանալով բարօրութիւն ամեն ազգերին, որոնք ներկայացած են կօնգրէսին, և Վիկտոր Հիւգօին, որպէս միջազգային գրականական դաշնակցութեան նախագահին։ Դրանից յետոյ ճառախօսեց Հռոմ քաղաքի մէրը, դուքս Տօրլօնիա, և իր ճառի մէջ շնորհակալութիւն յայտնեց ներկայ եղողներին այն բանի համար, որ կօնգրէսի նիստերի տեղը Հռոմն է ընտրված. բոլորի միաձայն հաւանութեամբ, նա առաջարկեց ողջոյնի մէկ հեռագիր ուղարկել Վիկտոր Հիւգօին։ Ապա խօսեցին Ֆրանսիայի կողմից—Ուլբախ, Անգլիայի կողմից—Հօվարդ և Սպէնսէր, Լեհաստանի կողմից—Շամաշիւսկի, Սպանիայի կողմից Պերեսօ-Դիաս, Ռումինիայի կողմից—Օթեթէա։ Հետևեալ օրից կօնգրէսը կը սկսի պարապել հերթական գործերով։

—«Daily News» լրագրին Բերլինից հեռագրում են, որ այնտեղ շատ ուրախ են Մերտենսի և «Freiheit» լրագրի տպարանի կալանաւորութեան պատճառով։

—«Volkszeitung» լրագրի Լօնդօնի թղթակցի խօսքերով, յանցանքների առաջն առնելու համար հրատարակված իռլանդական օրէնքը կընդունվի ստորին համայնքների ժողովում. բայց կառավարութիւնը ստիպված կը լինի շատ փոփոխութիւններ ընդունել, մանաւանդ մամուլի և ժողովներ կազմելու վճռի վերաբերութեամբ, որոնց սահմանափակումը, չը նայելով Իռլանդիայի գործերի կրիտիկական դրութեանը, չեն հաւանում ոչ ազատամիտ և ոչ պահպանողական կուսակցութիւնները։ Իռլանդական դատաւորները, իրանց կողմից, բողոքում են այն բանի դէմ, որ իրանք պէտք է առանց երդուեալների դատեն։ Պարնէլականները սկզբունքով նախագծի դէմ են։

—Վիէննայի «Vaterland» լրագիրը պահանջում է, որ պօլիցիան միջոցներ գործ դնի այն երիտասարդ մարդկերանց դէմ, որոնք, Վիէննայում, երգում են die Wacht am Rhein գերմանական ազգային երգը։

—Կ. Պօլսից լրագիրներին հաղորդում են, որ հրդեհի զոհ դարձաւ Բօժաբադ քաղաքը, որ գտնվում է Սինօպի մօտ. այրվեցան 400 տներ, մագազիններ և մզկիթներ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկական լրագիրները հաղորդում են, որ մի քանի տարի առաջ, Վաշինգտօնցի մի երիտասարդ գիտնական, միստէր Կուշինգ, Մեքսիկա գնաց մեքսիկական Պուէբլօ նահանգի հնդիկների լեզուն և բարքերը ուսումնասիրելու համար. Թէպէտ նրան հնդիկները բարեկամաբար ընդունեցին, բայց հաստատապէս հրաժարվեցին որ և է տեղեկութիւն հաղորդել օտարազգուն։ Տեսնելով որ իր ջանքերը իզուր են անցնում, երիտասարդ գիտնականը հերոսաբար վճռեց ինքն էլ հնդկացի դառնալ։ Նա ծանօթացաւ հնդկացիների մէկ առաջնորդի հետ, որը պատրաստակամութիւն յայտնեց իր որդու պէս ընդունել նրան իր ընտանիքում։ Այդ պատճառով նա ստիպված էր հնդիկների չոր հագնել և իւրացնել հնդկացիների ընտանեկան և այլ ծէսերը, այդ պատճառով նա կարողացաւ կատարելապէս ուսումնասիրել այդ ցեղի լեզուն, սրբազան բանաստեղծութիւնը և կրօնական ծիսակատարութիւնը։ Հնդկական ցեղի զինւորական առաջնորդ ընտրվելուց յետոյ միայն, նա Վաշինգտօն վերադարձաւ։ Այժմ նա ամերիկական լրագիրներում հաղորդում է, որ այդ ցեղը բաղկացած է 1,600 մարդկանցից և կառավարվում է երեսուն անդամներից բաղկացած մէկ խորհրդով. այդ խորհրդի ձեռքումն է ցեղի թէ զինւորական, թէ քաղաքական և թէ հոգևոր իշխանութիւնը։ Պուէբլօի հնդկացիները բնակվում են լեռների այրերում և շատ խաղաղ յարաբերութիւններ ունեն միմեանց հետ։ Հետաքրքիր տեղեկութիւնների թւում, Կուշինգ հաղորդում է, որ այդ հնդկացիների կրօնական գլխաւոր օրէնքների համեմատ, հնդկացիները պարտաւոր են ցածր խօսել և երբէք միմեանց չը խփել։ Կուշինգ չորս տարի մնաց այդ ցեղի մէջ, և այդ ժամանակամիջոցում նա երբէք կռիւ չէ տեսել և լացի ձայն չէ լսել։

* * *

Ասիական մեհեանները։ «Times of India» լրագրի խօսքերի համեմատ, ասիական մեհեանները բազմաթիւ գանձեր են պարունակում իրանց մէջ. բայց ամենքին յայտնի չէ, որ զանազան հազուագիւտ իրերի թւում, այդ մեհեանները զանգակներ ունեն, որոնք կարող են մրցել Արևմուտքի զանգակների հետ։ Չինացիք վաղուց յայտնի են իրանց զանգակներ ձուլելու արհեստով։ Նրանց հարևանները, Բիրմանական կայսրութեան ժողովրդները, այդ կողմից յետ չեն մնում չինացիներից։ Աշխարհիս երեսին ամենամեծ զանգակներից մէկը գտնվում է Մէնգունա քաղաքում, որ գտնվում է Իրաւադի գետի աջ ափի վրա, Մանդալէից մի քանի մղոն հեռու տարածութեան վրա. այդ զանգակը 20 ոտնաչափից աւելի բարձրութիւն ունի. Նրա տրամագիծը ներսից 16 ոտնաչափ ունի, իսկ ծանրութիւնը 80 տոնն է (մօտ 5,000 փութ)։ Այդ զանգակը կախ էր արած երեք երկաթապատ գերաններից, որ հաստատված էին քարեայ երկու պատերի վրա. բայց գերանները չը դիմացան այդ ծանրութեանը և այժմ զանգակը ընկած է գետնի և քարերի վրա։ Այդ ահագին զանգակը պատրաստված էր մէկ ընդարձակ մեհեանի համար, որի շինութիւնը ըսկսվեցաւ Մէնգունայում բիրմանական Մէն-Տարա-գուի թագաւորի ձեռքով, որ վախճանվեցաւ 1819 թւին քառասուն տարի թագաւորելուց յետոյ։ Մէն-Տարա-Գուի, որին հպատակները «Թագաւոր պապ» մականուն էին տուել, շատ բարեպաշտ մարդ էր. նա վճռեց նսեմացնել իր բոլոր նախորդներին մէկ մեհեանի շինութեամբ, որի ահագին չափերը նրա փառքը պէտք է հաստատէին երկրի վրա և երջանկութիւն պարգևէին հանդերձեալ կեանքում։ Նա ստիպեց իր ժողովրդին աշխատել և քրտինք թափել այդ շինութիւնը կանգնեցնելու համար, և փարաօնների օրինակին հետևելով, փայտի հարուածներով էր վարձատրում իր ժողովրդին։ Այդ բանի աշխատանքը քըսան տարի շարունակվեց։ Այնու ամենայնիւ թըշուառ բիրմանցիները շինութեան միայն ստորին մասը կարողացան վերջացնել և «Թագաւոր պապի» սկսված գործը այժմ ներկայացնում է աղիւսների մի մասսա, անկասկած ամենահսկայականը աշխարհիս երեսին, որովհետև նրա տարածութիւնը մօտ 6—7 միլոն կուբիքական ֆուտ է։ Մեհեանի վերջացրած մասը բաղկացած է մի քանի դարատափերից (терраса) և 100 ոտնաչափ բարձրութիւն ունի։ Այդ շինութիւնը նոյն դրութեան մէջ է մնացել, ինչ դրութեան մէջ թողել են աշխատանքը դադարեցնելու ժամանակ, միայն պատերը ճեղքվել են 1839 թւի երկրաշարժից։ Բիրմանցիները սովորութիւն ունեն մեհեանների դարատափերի վրա զանազան մեծութեան զանգակներ կախել, դրանք մեծ մասամբ բարեպաշտ անձանց նուէրներ են, որոնք յոյս ունեն դրանով ապահովել իրանց հոգու փրկութիւնը։ Կրօնական ծիսակատարութիւնը վերջացնելով, բիրմանցին, նախ քան տուն գնալը, ածում է իր սիրելի զանգակը։ Բացի մէնգունական ահագին զանգակից, Բիրմանիայում կայ էլի մի մեծ զանգակ Շուադիգագօնի մեհեանում, Ռանգունում։ Այդ զանգակը 2,500 փութ ծանրութիւն ունի։

* * *

Խելագարութիւն Աստուածաշնչից։ Նիւ-Եօրկի լրագիրները հաղորդում են, որ Ջէյմս Ֆիշէր անունով 26 տարեկան մի երիտասարդ, որ Պէնսիլվանիայի Լիտպորտ քաղաքում աստուածաբանութեան ուսանող է, իրան նպատակ դրեց ամբողջ աստուածաշունչը անգիր անել։ Վեց տարի շարունակ նա անխոնջ աշխատում էր այդ նպատակը իրագործելու, և ճշմարիտ, շնորհիւ իր գեղեցիկ յիշողութեան, նա այնտեղ հասաւ, որ Հին և Նոր Կտակարանի շատ գլուխներ կարողանում էր բերանացի ասել։ Երկու ամիս սրանից առաջ նա յայտնեց, որ յուլիսի 1-ին նա ամբողջ աստուածաշունչը անգիր կը գիտենայ։ Բայց նրա մտաւոր ընդունակութիւնները չը կարողացան տանել այդպիսի լարված աշխատանք։ Խելագարութիւնը երևեցաւ նրանում, որ Ֆիշէր, իր սենեակում, իր հօր տանը, եկեղեցու նման մի բան շինեց, ուր երգում էր և քարոզներ էր խօսում երևակայեալ ունկնդիրների առաջ։ Մեծ դժուարութեամբ նրան գժանոց տարան։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 մայիսի։ „Правит. Вѣстн.“ լրագիրը տպում է պարտամուրհակների նոր կանոնագրութիւնը, հրաւիրելով նրա մասին նկատողութիւններ անել։ Լրագիրները մայիսի 19-ից հաղորդում են, որ ֆինանսների մինիստրութեանը խնդիրք ներկայացվեցաւ բամբակեայ գործվածների և ներկված թելի մաքսահարկը բարձրացնելու մասին։ Ստատս-սեկրետար Գրօտ օգոստոս ամսից կը վարի կայսրուհի Մարիայի բաժնի գլխաւոր կառավարչի պաշտօնը։ Այրվեցաւ Գօրկա քաղաքը, որ գտնվում է Մօգիլէվի նահանգի մէջ։ Մօսկվայի մէջ ամեն բան պատրաստ է աշխարհահանդէսի բացման համար։ Վաղը Միտրօպօլիտը մաղթանք կը մատուցանէ։ Բարձր հիւրերը հասան այսօր։ Կոմս Իգնատիեվ նախապէս կը քննէ աշխարհահանդէսը։ Երէկ հրատարակվեցան կանօններ այցելուների համար։ Աշխարհահանդէսը բաց կը լինի առաւօտեան 10 ժամից մինչև երեկոյեան եօթ ժամը։ Այցելուների մուտքը դադարեցնվում է ժամի 5-ին։ Երէկ կայացաւ առաջին կօնցերտի գլխաւոր կրկնութիւնը։ Ռուբինշտէյնի „Ռուսաստան“ ուվերտիւրան շատ են գովում։ Էգուց կը դուրս գայ „Промышленно-Художественная Выставка“ լրագրի առաջին համարը։ Առաջին հարկաւորութեան մթերքների գները չափազանց բարձրացան։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ԹԻՖԼԻՍ. Էմմանուէլ: Շատ ուրախ ենք եթէ ձեր ճանապարհորդութենից էլ կը թղթակցէք: Միայն խնդրում ենք, փոքր ինչ աւելի որոշ և մաքուր գրեցէք:

—ԱՐՏՈՒԻՆ. Ա. Ս. Նամակ գրեցինք ձեզ:

—ԻՎԱՆՕՎԱ. Տ. Տ. Գ. Դուք ապրիլ ամսին գրվել էք «Մշակին» պ. Բ—ի համար և պահանջել էք բոլոր համարները յունվարի 1-ից: Հազար անգամ յայտնել ենք որ դա անհնարին է: Ուշ գրվողը ինքն մեղաւոր է որ բոլոր համարները չէ կարող ստանալ: Ոչ թէ միայն «Մշակի» պէս մի թերթ, որին համ քիչ են գրվում, համ շատերը բաժանորդագին չեն վճարում, բայց նոյն իսկ «Գոլոսի» պէս մի տարածված թերթին, որ գուցէ 20,000 օրինակով է տպվում, եթէ մարտին կամ ապրիլին կը գրվէք, երբէք չէք ստանայ բոլոր համարները յունվարից: Ի՞նչի հայը կարծում է որ հայոց թերթի խմբագիրը անպատճառ ամեն մէկի ծառայ, ամեն մէկի տարուկ պէտք է լինի:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԻՆՉԵՒ ԱՄՍՎԱՅ ՎԵՐՋԸ

ՄԱՏԻՏՆԵՐ 8 կ. դիւժինը, ԾՐԱՐՆԵՐ 3 կ. հարիւրը, սապօն 3 կ. հատը, արևի ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐ 50 կ., ՇՂԹԱՆԵՐ (նոր ոսկուց) ժամացոյցի համար 50 կ., կրաններ 10 կ., ջրի ամաններ 30 կ., կժեր 25 կ., կախարաններ 4 կ., ՖԻԼՏՐԱՆԵՐ 3 ր., ԾԸԾԻՂՆԵՐ 1 ր., հայելիներ 35 կ., վարտիքներ 4 ր., պիջակներ 6 ր., ԱՄԲՈՂՋ ՀԱԳՈՒՍՏ 13 ր., գլխարկներ 1 ր., ՀԸ ԹՐՋՎՈՂ վերարկուներ 6 ր., շչէօտկա 90 կ., ԱՍԵՂՆԵՐ 100 հատը 8 կ., կանանց և տղամարդկանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 2 ր. 50 կ. դիւժինը, ՄԵՂՐԱՄՈՄ 32 կ. անգլիական ֆունտը, կանֆետներ 40 կ. ֆունտը, ԴՐԱՊ, տրիկօ, ԱԼԲՕՄՆԵՐ, բրիտանական մետալի առարկաներ և այլն ԿԻՍԱԳՆՈՎ, մոմեր, մուրաբա և այլն շատ էժան:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԷՑ:

36—50

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի Հայոց Ծխական ուսումնարաններում:

Մայիսի 18 և 19-ին կաթող. ս. Գէորգ եկեղ. ուսումն.
— — 20-ին Զորաբաշի ս. Գէորգ եկեղ. ուսումն.
— — 22-ին Շամքորեցոց եկեղ. ուսումն.
— — 24-ին ս. Մինաս եկեղ. „Իզմիրեան“ ուսումն.
— — 25 և 26-ին կուկիա ս. Աստուածածին եկեղ. ուսումն.
— — 27-ին ս. Կարապետ եկեղ. ուսումն.
— — 28 և 31-ին Աւետեաց եկեղ. տղ. և օր. ուսումն.
Յունիսի 1, 2 և 3-ին Հաւլաբ. Մարիամեան օր. ուսումն.
— — 4 և 5-ին Թանդոյեան օր. ուսումն.

Հարցաքննութիւնները կը սկսվեն առաւօտեան 8 ժամին: Թեմական վերատեսուչ Գ. Բարխուդարեանց:

Մի ԵՐԻՏԱՍԱՐԴ որ աւարտել է Թիֆլիսի ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ *ինստիտուտի ուսման ընթացքը, ցանկանում է Թիֆլիսի Հայոց ուսումնարաններում* ՈՒՍՈՒՑՉԻ պաշտօն ունենալ: Հասցէն կարելի է իմանալ „Մշակի“ խմբագրատան մէջ:

3—10

Մանկավարժական ինստիտուտի վերջին դասատան ուսանող պատրաստում է աշակերտներ այստեղ կամ ամարանոց. Հասցէն. Александровскій учительскій институтъ на Михайловской улицѣ (колонія) Александръ Захаровъ.

4—4

ՐԱՖՖԻ

„ՈՍԿԷ ԱՓԱՂԱՂ“

Վիպասանութիւն հայ վաճառականական կեանքից, մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի Թիֆլիսում.

Կանխապէս բաժանորդ գրողներին 1 ր. (2 փոստի մարքայով).

Հասցէ. Սալի-Օղլու ֆաբրիկայում Յովհաննէս Ս. Ստեփանեանցին. Թիֆլիս.

2—3

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՀԵՍՏՈՒՄ

ВЪ СКЛАДѢ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ

Ադրյանու գալերեան № 144 ծալվում է. արևմուտք դիմերով վերջինի

Տոնկա Փարիզիայի ամեն տեսակ մետաքսեղէն, նոր ոճով մեծ ընտրութիւն մանդիլներ և շորանոցներ:

ՀԱՅԵԼԻՆԵՐԸ ԱՆԳԼԻԱՅԻ

43—60

ՐԱՖՖԻ

ԴԱՒԻԹ ԲԷԿ

ԳԻՐՔ ԵՐԲՈՐԴ

Բաղկացած է 563 երեսներից

ԳԻՆՆ Է 2 ՐՈՒԲԼ

Օտարաքաղաքացիք ուղարկում են ճանապարհածախք 15 կ. մարկաներով. տասնով գնողները ճանապարհածախք չեն վճարում: Տասնից աւելի գնողները 10 % զիջում են ստանում:

„ЦЕНТРАЛЬНАЯ КНИЖНАЯ ТОРГОВЛЯ“
Тифлисъ, Головинскій проспектъ д. Мириманова, №№ 3 и 4.

14—15

ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ, Գօլովինսկի պրոսպեկտի վրա, տուն Ճարտարապետ Բէլօի: Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներից:

Лечебница Общества Покровительства животныхъ, Песковская улица д. Гврити-швили. Пріемъ больныхъ съ 8 до 9 часовъ утра ежедневно, за исключеніемъ воскресныхъ, праздничныхъ и табельныхъ дней.

Կենդանիների Հովանաւորութեան Թիֆլիսի ընկերութեան բժշկանոցը գտնվում է Սաղի վրա, Պեսկովկայա փողոց, տուն Գվրիտի-շվիլի: Ընդունելութիւն հիւանդ կենդանիների ամեն օր, ժամը 8-ից մինչև 9 առաւօտեան, բացի կիրակի և տօն օրերից:

8—10

Շտաբս-կապիտան ՄԱՆԻԿՈՎ *յայտնում է որ մայիսի 18-ին, ներկայ 1882 թվին* ԱՆԴՐԻՈՎԿԱՅԻ ՊՐԻԿԶՈՒՄ *ամուրդ կը լինի, երեք օրից յետոյ կրկնամուրդով եղիսաբէթ* ՄԱՆԻԿՈՎԱՅԻՆ *պատկանող տան վրա, որ գտնվում է Թիֆլիսի 1 բաժնի 3-որդ շրջանում, Սապերնի փողոցում, 1879 թվին արած փոխառութեան վրա մնացած 8,148 ռուբլ ապառիկի պատճառով:*

Յանկացողները այդ տունն առնելու, կարող են տեսնել գնահատողական ստորագիրը Պրիկազում:

4—5

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

БРОШЮРА

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

Լոյս տեսաւ Տիգրան Նազարեանի հրատարակութիւնների VI գրքոյկը Զ. Դիկկենսի „Հարս և Սկեսուր“ թարգ. օր. Ն. Տէր-Մարկոսեանի: Գրքոյկի վերջը իբրև յաւելուած տպուած են գրականութեան վերաբերեալ յայտարարութիւններ, առաջարկութիւններ և այլն:

Գինն է 15 կ.

Հասցէն Тифлисъ. Тиграну Назарьянцъ.

JOURNAL D'ORIENT

HEBDOMADAIRE

Paraissant a VIENNE (Autriche)

ABONNEMENTS: 1 an. . . 8 roubles
6 mois. . . 4 —

S'adresser à F. Salles, avocat
1. Weihburggasse 9. (Vienne)

Sans ajouter le titre du journal.

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԵՆՆԱՑԻ ՄԵԲԵԼ ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակվոյաժներ 1. 30—12 ր., սուն դուկներ ճանապարհի 6—35 ր., մարաններ (погребцы) 6—25 ր., սամովարներ 60 կ.—1.25 ֆունտը., կուխոնների պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ուռմիվալնիկներ մրամօրնի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլանի 6—32 ր., ռէվոլվերներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոնները. (գուլաններ) ռէվոլվերի, սիգար Ռէնդարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարովի գիլզի պապիրոզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՑ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էինէմի. կոֆէ էինէմի և Միլեզլսօնի. պետերբուրգու 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինէվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) զուլթուկ (пухъ), պաղնոտներ սամովարի և չայու, դանակ չանգալ զանազան ֆաբրիկաների 1 ր. 20 կ.—25 ր. դուժինը. գրչակոթներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջիբի 1—60 կ.—12 ր., դանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուխոնի 1—40 մինչև 3—20 կ. պրիբոր. միս կարելու մաշինայ. Անգլիական ուլթոներ, Բրիտանսկի չայնիկներ, կաֆէինիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրամմոլ կարօրկէն 18 կ., վաքս ֆրանսիայի ժակոյ, թուղթ փոշտի, կանվերտներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարեսախտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիեներ, գդալներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանսկի գուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուտիչկեք 45 կ.—5 ր., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. ջուխտ, պղնձապոշկաններ վարշավու, ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալոշտիկներ, զոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոքի. սանդրեր շիրմայու ոսկորէ, գուտապերչովի և փայտէ, շչոտկաներ գլխի, շորի, սապոգի, պոլի և կարտի համար. չուլքի թէլ (бумага) մատոկի կօճի և շալէ (гарусъ) ֆէլչատկէք մարդկերանց և կանանց, պորտմանեներ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գոլանտերէյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կոտր, հոտավէտ ջրեր, պուդրա, Գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻՎԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ միշտ գտնվում են ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում. (въ складѣ) *միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում* № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

55—180

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

Дозволено цензурою, Тифлисъ, 20 Мая 1882 года. Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час. Лор.-Мелик. ул., каз. д.